ԱՐՄԻՆԻԱ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

ԱՐՄԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Արմինիա ոստիկանությունը կազմավորվեց VIII դ. սկզբին, երբ արաբ զորավար Մուհամմադ իբն Մարուանը նվաճեց Հայաստանը, Վիրքը, Աղվանից աշխարհն ու մերձկասպյան շրջանները՝ Կուր գետից մինչև Դարբանդ: Ըստ արաբ հեղինակների՝ Արմինիան բաժանված էր չորս մասի, որոնք համապատասխանաբար կոչվում էին Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ Արմինիա[1]: Քննության առնելով Արմինիա ոստիկանության սահմանների խնդիրը՝ մենք գալիս ենք այն եզրակացության, որ խալիֆայության այդ կուսակալության վարչատարածքային բաժանումը համարյա թե նույնությամբ կրկնում էր Սասանյանների տիրապետության ժամանակաշրջանի Հայոց, Վրաց և Աղվանից մարզպանությունների վարչական պատկերը[2]: Ինչ վերաբերում է Չորրորդ Արմինիային, ապա դրա կազմում ընդգրկված էին Բյուզանդական կայսրությունից նվաճված Մեծ Հայքի արևմտյան աշխարհները՝ Բարձր Հայքն ու Ծոփքը, որոնց մերձեփրատյա գավառներն ընդգրկված էին արաբաբյուզանդական սահմանային ամրությունների գոտում, ինչպես նաև Մեծ Հայքի Տուրուբերան աշխարհի այն գավառները, որտեղ արաբական ցեղեր էին վերաբնակեցվել:

Արմինիա ոստիկանության սահմանների խնդրով զբաղվել է Ա. Տեր-Ղևոնդյանը[3]: Նա Արմինիայի սահմանների քննության համար հիմք է ընդունել

---

[1] *IX դ. արաբ աշխարհագետ Իբն Խորդադբեհը հաղորդում է, որ Արմինիան բաժանված էր չորս մասի. «Առաջին Արմինիա. Սիսաջան, Առան, Թիֆլիս, Բարդաա, Բայլական, Կաբալա և Շարվան, Երկրորդ Արմինիա. Ջուրզան, Սուղդաբիլ, Բաբ Ֆիրուզ Կուբադ և ալ-Լակզ, Երրորդ Արմինիա. Բուսֆուրրաջան, Դաբիլ, Սիրաջ Թայր, Բաղրավանդ և Նաշավա, Չորրորդ Արմինիա. Շիմշաթ, Խիլաթ, Կալիկալա, Արջիշ և Բաջունայս» (տե՛ս* I b n K h o r d â d b e h. Kitab al-masalik wa'l-mamalik.-Bibliotheca geographorum arabicorum (*այսուհետև՝* BGA I-VIII, 1967), VI, Lugd. Bat., 1967, p. 122-123): *Նույնը վկայում են նաև Բալազուրին (տե՛ս* بلاذري، كتاب فتوح البلدان، ١، القاهرة، ١٩٥٦ ص 231) *և Իբն ալ-Ֆակիհը (տե՛ս* I b n a l - F a k i h a l - H a m a d h a n i. Kitáb al-boldan.– BGA, V, p. 286-287*):*

[2] *Ըստ Ս. Երեմյանի՝ Հայոց մարզպանության կազմում, նախքան 591 թ. բաժանումը ընդգրկված էին Մեծ Հայքի Այրարատ, Տայք, Տուրուբերան, Մոկք, Վասպուրական, Սյունիք (վերջինս 571 թ. ապստամբության նախօրեին առանձնացել էր Հայոց մարզպանությունից (տե՛ս Պատմութիւն Սեբէոսի (այսուհետև՝ Ս ե բ ե ո ս), աշխատասիրությամբ Գ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 67–68) աշխարհները (տե՛ս Ս. Ե ր ե մ յ ա ն. Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի. Երևան, 1963, էջ 118): Սակայն քննությունն ապացուցում է, որ Հայոց մարզպանության կազմում մնացել էին նաև Կորճայքի Կորդիք և Տմորիք երկրամասերն ու Պարսկահայքի հյուսիսային գավառները (այս մասին մանրամասնորեն տե՛ս ստորև): Վրաց մարզպանությունն ընդգրկում էր Վերին աշխարհ Վրացը, Մեսխեթին, Կախեթ-Կուխեթը, Սրգվեթը, Գուգարքը, Ալանաց դռների ամրությունների շրջանը, իսկ Աղվանից մարզպանության կազմում՝ Բուն Աղվանից աշխարհը, Արցախը, Ուտիքը, Ռոստակը, Բագկանը, Դարբանդը, Թավասպարքը, Ղեկքը, Չողան, Շրվանը և Խորվանը (տե՛ս Ս. Ե ր ե մ յ ա ն. նշվ. աշխ., էջ 119–120):*

[3] *Ա. Տ. Ղ և ո ն դ յ ա ն. Արաբական խալիֆաթի վարչական քաղաքականությունը Հայաստանում (7–9 դդ.) (պատմ. գիտ. թեկ. գիտ. աստիճանի հայցման ատենախոսություն). Երևան, 1954:*

ալ-Իսթախրու վկայությունը, թե արաբների կողմից որպես մեկ երկիր (կլիմա) դիտվող Արմինիան, Առանը և Ադարբայջանն արևելքում սահմանակցում են Ջաբալին, Դայլամին և Խազարների ծովի (Կասպից ծով) արևմտյան ափին, արևմուտքում՝ Արմանին, որին մենք դեռ կանդրադառնանք, և մասամբ Ջազիրային, հյուսիսում՝ ալաններին ու Կաբկ լեռներին (Կովկասյան լեռներ), իսկ հարավում՝ տարածվում մինչև Իրաքի սահմաններն ու Ջազիրան[4]*: Սակայն քանի որ Ադարբայջան անվանումն արաբ հեղինակները տալիս են Ատրպատականին*[5]*, ապա ալ-Իսթախրու հիշատակած այս սահմաններն Արմինիա ոստիկանության վերադրելը ճիշտ չէ կամ գոնե ճիշտ չէ մասամբ՝ կապված հարավային սահմանի հետ:*

Ջեռնարկելով Արմինիա ոստիկանության սահմանների քննությունը՝ նշենք, որ, ըստ արաբ հեղինակների, հյուսիսում Արմինիա ոստիկանության սահմանը կազմում էր սահմանային ամրությունների մի գոտի, որը ձգվում էր Ալանաց դռնից (Բաբ ալ-Լան) մինչև Դարբանդ (Բաբ ալ-Աբվաբ): Իբն ալ-Ֆակիհը, պատմելով այդ սահմանային ամրությունների գոտու մասին, հաղորդում է, որ այն բաղկացած էր 360 ամրոցներից: Դրանցից 110-ը գտնվում էին մուսուլմանների տիրույթներում՝ մինչև Թաբարսարանի հողերը, իսկ մնացածները Ֆիլանում և Սարիրում՝ մինչև Բաբ ալ-Լան[6]*: Միայն Բաբ ալ-Աբվաբի շրջակա լեռներում կային 14 ամրոցներ*[7]*: Իբն Խորդադբեհը, անդրադառնալով սահմանային ամրությունների այս գոտուն, պատմում է, որ դեռևս Սասանյանների տիրապետության օրոք Խոսրով Անուշիրվանն այստեղ կառուցել էր բազմաթիվ ամրություններ: Նա հստակորեն նշում է, որ Բաբ ալ-Աբվաբ անվանումը (Դռների դուռ) վերաբերում է Դարբանդին, իսկ սահմանային ամրությունների գոտին նա անվանում է ալ-Աբվաբ (դռներ): Այս դռները կառուցված էին Կովկասյան լեռների կիրճերի ելքերի մոտ և դրանց թիվը հասնում էր 360-ի: Դրանցից էին Բաբ-Ալանը, Բաբ Սահիբ աս-Սարիրը, Բաբ Ֆիլանշահը, Բաբ Թաբարսարանշահը և այլն*[8]*:*

Իբն ալ-Ֆակիհի վկայությունից հետևում է, որ սահմանային ամրությունների գոտում՝ Դարբանդի ամրությունների շրջանից դեպի արևմուտք, հերթականությամբ գտնվում էին Թաբարսարանը, Ֆիլանը և Սարիրը, որոնք Արմինիա ոստիկանության մաս էին կազմում[9]*: Թաբարսարանի տեղը հայտնի է. այն գտնվել է այնտեղ, ուր այսօր էլ բնակվում են Թաբասարանները, այսինքն՝ Ռուբաս գետի վերին ու միջին հոսանքի ավազանում*[10]*:*

---

[4] A l - I s t a k h r i. Kitáb masálik al-mamálik.– BGA, I, 1967, p. 181.

[5] Jacut's Geographisches Wörterbuch aus den Handschriften zu Berlin, St. Petersbourg und Paris herausgegeben von Ferdinand Wüstenfeld (*այսուհետև՝* J a c u t). Leipzig, 1924 (in sechs Banden), b. I, S. 171-175.

[6] BGA, V, p. 286-287.

[7] BGA, I, p. 193.

[8] BGA, VI, p. 123-124.

[9] BGA, V, p. 290-291. *Ֆիլանը գտնվում էր Սարիրի գերիշխանության ներքո, քանի որ Սարիրի թագավորը կրում էր Ֆիլանշահ տիտղոսը (տե՛ս* J a c u t, I, S. 350):

[10] Этническая карта Дагестанской АССР.— «Народы мира», Т. I, «Народы Кавказа», М., 1960, с. 416, карта. *Հմմտ.* История, география и этнография Дагестана XVIII-XIX вв., М.,1958, с. 86—87, 102—107, 150—154, 197—199, 311—317.

Սեփական «բաբ»-երով նշանավորված Ֆիլանը պետք է փնտրել Կովկասյան լեռների արևելյան հատվածի հյուսիսահայաց լանջերին՝ Սարիրի և Թաբարսարանի միջև: Ուսումնասիրողները Սարիրը[11] տեղադրում են Անդյան ու Ավարյան Կոյսուների հովիտներում[12]: Սարիրի այդպիսի տեղադրության օգտին են խոսում հետևյալ կարևոր իրողությունները. նախ Սարիրի թագավորը կոչվում էր «ավար»[13], ինչը պարզորոշ ցույց է տալիս Սարիրի կապն այժմյան Ավարստանի հետ, հետո՝ այստեղ՝ Անդյան և Ավարյան Կոյսուների վերին հոսանքների միջև, գտնվում է Խունզախ քաղաքը, որը, ըստ երևույթին, համապատասխանում է Մարուանի երկրորդ արշավանքի ժամանակ հիշատակվող Սարիրի Խայզաջ ամրոցին[14], ապա՝ այստեղ է գտնվում Հումրաթ գյուղը[15], որն էլ, թերևս, նույնական է Սարիրի Հումրաջ մայրաքաղաքին[16]: Բացի այդ, Սարիրի Ղումիկ ամրոցն էլ[17], իր հերթին, համապատասխանում է այժմյան Ղումուխ քաղաքին[18]: Սարիրի և Խազարների թագավորության միջև սահման էր հանդիսանում Ավարյան Կոյսու դետի և Դաղստանի դաշտավայրային մասի՝ Կասպից ծովը թափվող գետերի միջև ջրբաժան ծառայող լեռնաշղթան[19], որից դեպի հյուսիս-արևելք գտնվում էր խազարական Սամանդար քաղաքը: Վերջինս Ս. Երեմյանը տեղադրում է այժմյան Մախաչկալա քաղաքից հարավ՝ Թարքի վայրում[20]: Աշխարհագրական առումով Սարիրի արևմտյան սահմանը պետք է անցնելիս լիներ Անդյան Կոյսուի ձախ ափին ձգվող լեռների (որոնց հյուսիսային հատվածը կոչվում է Անդյան լեռնաշղթա) ջրբաժան գծով[21]:

---

[11] *Սարիրի թագավորության մասին մանրամասնորեն տե՛ս Ա. Եղիազարյան. Արաբական աղբյուրների Սարիրի թագավորությունը.– «Գիտության գլոբուս», 2004, հ. 4, էջ 99–106:*

[12] С. Еремян. Моисей Каланкатуйский о посольстве албанского князя Вараз-Трдата к хазарскому хакану Алп-Илитверу.– «Записки Института востоковедения АН СССР». Т. VII, 1939, с. 144; В. Минорский. История Дербенда и Ширвана IX-XI вв. М., *1963*, с. 132-137.

[13] Kitáb al-a'lak an-nafîsa auctore Abû-Ali Ahmad-ibn-Omar ibn Rosteh.–BGA, VII, p. 147.

[14] خيزاج :ابن الاثير، الكامل في التاريخ، ٤، بيروت، ١٩٦٧، ص 245 خنزاخ-(*Խայզաջ*) (*Խունզախ*) *շփոթը միանգամայն հնարավոր է (Ա. Եղիազարյան. նշվ. աշխ., էջ 102):*

[15] История, география и этнография Дагестана XVIII-XIX вв., с. 270-271.

[16] مسعودي، مروج الذهب و معادن الجوهر، ١-٢، القاهرة، ١٩٤٨، ص 193 (*Ա. Եղիազարյան. նշվ. աշխ., էջ 102):*

[17] BGA, VII, p. 148.

[18] *Այդ համապատասխանեցումն անում է Ս. Երեմյանը (Ս. Երեմյան. Հայաստանը ե. հարևան երկրները 855–953 թթ., քարտեզ. Երևան, 1976): Այս դեպքում այլ հարց է առաջ գալիս. Ղումուխը գտնվում է լակերի երկրում, որը, ինչպես կտեսնենք, համապատասխանում է արար հեղինակների Տուման իշխանությանը: Պետք է նշել, որ արար հեղինակների վկայություններից երևում է, որ մի ինչ-որ ժամանակ Դարբանդի և Ալանաց դռան միջև գտնվող լեռնային շրջանը դրված է եղել Սարիրի տիրոջ՝ Սահիր աս-Սարիրի իշխանության տակ (տե՛ս* Jacut, I, S. 221-222)*: Ուստի՝ Ղումիկ-Ղումուխի՝ Սարիրի իշխանության մեջ գտնվելու մասին հիշատակության պատճառը պետք է, որ այդ ժամանակների իրողության արտահայտությունը լինի:*

[19] С. Еремян. *Նշվ. աշխ., էջ* 144:

[20] *Նույն տեղում, էջ 142–143: Տե՛ս նաև Ս. Երեմյան. Հայաստանը և ... քարտեզ:*

[21] *Տե՛ս ռուսական ցարական բանակային շտաբի հինգվերստանոց քարտեզի Ж. 5. և Ж. 6. պլանշետները:*

Արաբական աղբյուրների Զարիքիրան իշխանությունը գտնվում էր Ղուբաչի ավանի շրջանում[22], իսկ վերջինից արևմուտք տարածվում էր Տումանը, որը Մարուան իբն Մուհամմադի դեպի Խազարական թագավորություն կատարած աբշավանքի ժամանակ հիշատակում է Իբն ալ-Ասիրն ի թիվս Սարիրի, ալ-Լաքզի և այլ իշխանությունների[23]: Մեր կարծիքով, Տումանը համապատասխանում է լակերի երկրին: Բանն այն է, որ իրենց հարևան լակերին կամ կազիկումուխներին «տուման» (հոգ. տումալ) անվամբ կոչում են ավարները[24], որոնք արաբական տիրապետության շրջանում բնակություն էին հաստատել Սարիրում[25]: Իսկ արաբները Տուման ներխուժեցին Սարիրից[26]: Լակերն այսօր էլ բնակվում են Կազիկումուխյան Կոյսու գետի վերին ու միջին հոսանքի ավազանում[27]: Տումանի ու Զարիքիրանի հարևանությամբ, Թարարսարանից ավելի հյուսիս, գտնվում էր Ֆիլանը[28]: Այն պետք է գտնվեր Սաբիրից դեպի արևելք՝ զբաղեցնելով հիշյալ ջրբաժան լեռնաշղթայից հարավ-արևելք գտնվող լեռնային շրջանը մինչև Ղուբաչի:

Այսպիսով՝ Արմինիայի հյուսիսային սահմանն Ալանաց դռնից արևելք Կովկասյան լեռների գագաթնագծով շարժվելու էր մինչև Անդյան լեռնաշղթան և այդ լեռնաշղթայի ջրբաժանով հասնելու էր Սուլակ գետին, որից այն կողմ՝ Ավարյան Կոյսուի արևելյան ջրբաժանով իջնելու էր հարավ, որտեղ, լակերի երկրից դեպի արևելք ընկած լեռնային շրջանում, գտնվում էր Ֆիլանը:

Արևելքում Արմինիա ոստիկանությունը սահմանակցում էր Կասպից ծովին, իսկ հարավում դրա սահմանն անցնում էր Կուր և Երասխ գետերով՝ Ատրպատականի ոստիկանության կազմում թողնելով Մուղանը[29], Վարսան-Վարդանակերտն[30] ու Բաղդ երկիրը[31]: IX–X դդ. արար աշխարհագետ

---

[22] Ըստ Մասուդիի՝ Զարիքիրանը գտնվում էր Սաբիրից արևելք և իրենից մի փոքրիկ անառիկ իշխանություն էր ներկայացնում: Այդ անվանումը պարսկերեն նշանակում է «զրահագործ վարպետներ» (տե՛ս [illegible], էջ 192): Զարիքիրան երկրի տեղորոշման համար կարելի է հիմք ընդունել Մ. Արտամոնովի և Վ. Մինորսկու տեղադրությունը: Կովկասագետները, հիմք ընդունելով «Զարիքիրան» անվան պարսկերեն թարգմանությունը, այդ երկրի ժողովրդին նույնացնում են այժմյան Ղուբաչի ավանի բնակչության հետ, որոնք այսօր էլ հայտնի են իրենց հնամյա արհեստով: Այսինքն՝ Զարիքիրան իշխանությունը զբաղեցնում էր Ղուբաչի քաղաքի շրջակա տարածքը (տե՛ս М. Артамонов. История хазар. Л., 1962, с. 229; В. Минорский. Նշվ. աշխ., էջ 203, ծանոթ. 71):

[23] Տե՛ս ابن الاثير, IV, էջ 216, بلاذري, I, էջ 245:

[24] Народы Кавказа, с. 487. Տե՛ս նաև Абу Мухаммад Ахмад ибн А'сам ал-Куфи. Книга завоеваний. Пер. З. Буниятова, Баку, 1981, с. 82, примеч. 80 և В. Минорский, Նշվ. աշխ., էջ 132:

[25] Ա. Եղիազարյան. Նշվ. աշխ., էջ 103:

[26] Տե՛ս ابن الاثير, IV, էջ 216:

[27] Этническая карта Дагестанской АССР.– "Народы Кавказа", с. 416, карта.

[28] Jacut, I, S. 438-439, III, S. 933.

[29] Նույն տեղում, IV, էջ 686: Մուղանն Ատրպատականի ոստիկանության կազմում են հիշատակում նաև Իբն Խորդադբեհը (BGA, VII, p. 119), Իբն ալ-Ֆակիհն (BGA, V, p. 285) ու ալ-Իսթախրին (BGA, I, p. 182):

[30] BGA, VI, p. 121.

[31] Բաղդ երկրի աշխարհագրական դիրքի մասին Մասուդին հաղորդում է Երասխ գետի մասին հիշատակելիս. «Ար-Բասը հոսում է Բաղդայն երկրի, որը Խուրամյան Բաբաքի հայրենիքն է Ադարբայջանում, և Զաբալ Աբի Մուսա երկրի միջև, որն Առանի մասերից է»

իբն ալ-Ֆակիհը վկայում է, որ «Ադարբայջանի (Ատրպատականի ոստիկանության) սահմանները մինչև ար-Բաս (Երասխ) են (տարածվում), իսկ Քուռն Արմինիայում է»[32]: Երասխ գետի՝ Արմինիա և Ատրպատականի ոստիկանության սահման հանդիսանալու ապացույցն է նաև Ղևոնդի այն վկայությունը, որտեղ պատմիչը, նկարագրելով խազարների արշավանքը, տեղեկացնում է, որ նրանք «միաբանեալք ելանէին ընդ աշխարհն Հոնաց և ընդ պահակն Ճորայ..., անցանէին ընդ գետն Երասխ յերկիրն Պարսից (Ատրպատական, ավելի ստույգ՝ Ատրպատականի ոստիկանություն)»: Վերջինիս կազմում VIII դ. պատմիչը հիշատակում է Մեծ Հայքի Փայտակարան աշխարհի գավառները[33]:

Շարունակելով Արմինիայի հարավային սահմանների քննությունը՝ անհրաժեշտ է նշել, որ չնայած հայագիտության մեջ արմատավորված այն տեսակետին, թե Մեծ Հայքի թագավորության 387 թ. բաժանման ժամանակ Պարսկահայքն ամբողջությամբ հանվել է Մեծ Հայքից[34], սկզբնաղբյուրներում պահպանված տեղեկություններն ապացուցում են, որ նրա հյուսիսային հատվածը՝ սկսած Այլի գավառից մինչև Զարևանդի հյուսիսային սահմանները[35], մտնում էր Հայոց մարզպանության մեջ: Թովմա Արծրունին պարզորոշ վկայում է, որ Այլի (Էլի) գավառը մտնում էր Արմինիա ոստիկանության մեջ՝ հստակորեն այն տարբերելով Ատրպտականի ոստիկանությունից ու Պարսից կողմերից[36]: Իսկ Եղիշեն էլ հաղորդում է, թե 450–451 թթ. ապստամբությունը ճնշելու նպատակով եկած պարսկական բանակը «հասանէր յաշխարհն Հայոց ի Հեր և ի Զարևանդ գաւառ»[37]: Եղիշեի վկայությունն ուղղակի արձանագրումն է Հեր և Զարևանդ գավառների՝ Հայոց մարզպանության կազմում լինելու փաստի: Աշխարհագրական առումով Հայոց մարզպանության կազմում պետք է մնացած լիներ նաև Պարսկահայքի Այլի և Զարևանդ գավառների միջև ընկած հատվածը[38]: Երբ արաբները նվաճեցին Այսրկովկասյան երկրները, նրանք պահպանեցին Ասասանյան Պարսկաստանի վարչական բաժանումը և Պարսկահայքի նշյալ գավառները մաս կազմեցին Արմինիա ոստիկանության: Ա-

---

(տե՛ս [illegible], էջ 206): Զարալ Աբի Մուսա (Աբի Մուսայի լեռ) ասելով՝ Մուսադին նկատի ունի Արցախի լեռների հարավային շրջանները, որտեղ Դերիշ (Գտիչ) ամրոցում Եսայի Աբու Մուսե Առանշահիկ իշխանը հերոսական կռիվներ մղեց Բուղայի զորամասերի դեմ (տե՛ս Թ ո վ մ ա Ա ր ծ ր ո ւ ն ի և Ա ն ա ն ո ւ ն. Պատմութիւն տանն Արծրունեաց. Երևան, 1985, էջ 276–278 և Հայ ժողովրդի պատմություն. հ. Բ, Երևան, 1984, էջ 358): Փաստորեն, Բաղդը հարավից հարևան էր Մեծ Հայքի Արցախ աշխարհին:

[32] BGA, V, p. 296:

[33] Պատմութիւն Ղևոնդեայ Մեծի վարդապետի Հայոց (այսուհետև՝ Ղ ևոնդ). Ս. Պետերբուրգ, 1887, էջ 101:

[34] Ն. Ա դ ո ն ց. Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում (թարգմ. ռուսերենից Ա. և Է. Խոնդկարյանների), Երևան, 1987, էջ 254:

[35] Պարսկահայքի այդ հատվածն ընկած է պատմական Մարի գետի (այժմ Բարանդուզչայ) և Զեյրավանդ բնակավայրի միջև (Բ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացույց»-ի. Երևան, 2001, էջ 313-323: Տե՛ս նաև Ն ո ւ յ ն ի՝ Հայաստանն ըստ «Աշխարհացույց-ի և այլ աղբյուրների» քարտեզը, Երևան, 2001):

[36] Թ ո վ մ ա Ա ր ծ ր ո ւ ն ի և Ա ն ա ն ո ւ ն, էջ 232:

[37] Ե ղ ի շ է. Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին (այսուհետև՝ Ե ղ ի շ ե), Երևան, 1989, էջ 212:

[38] Այդ մասին մանրամասնորեն տե՛ս Բ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 347-351:

բաբ հեղինակների տեղեկություններն արտացոլում են այդ իրողությունը: Իբն Խորդադբեհը հաղորդում է, որ Արմինիա ոստիկանության կազմում ընդգրկված էր Պարսկահայքի Հեր (արաբ. Խուայյ) գավառը[39], իսկ ալ-Մուկադդասին էլ վկայում է, որ Արմինիայի կազմում ընդգրկված էին Հերը, Սալմաստն (Սալամաս) ու Ուրմիոն[40]:

Սակայն արաբական տիրապետությունն իր հետ բերեց նաև որոշ փոփոխություններ: Երբ Արմինիայի այս կամ այն մասում հաստատվում էին արաբ իշխանավորներ կամ վերաբնակիչներ և հիմնադրում իրենց իշխանությունները, նրանք վարչականորեն ենթարկվում էին Արմինիայի ոստիկանին: Ուստի և ավելի ուշ հայոց թագավորներն ու իշխաններն իրենց իրավունքն էին համարում նրանց իրենց ենթարկելը: Կոստանդին Ծիրանածինը հաղորդում է, որ Աշոտ I-ի իշխանությունը ճանաչում էին Հերի և Սալամասի (Սալմաստ) արաբ իշխանները[41]: Իսկ Հովհաննես Դրասխանակերտցին պատմում է, որ «(Գրիգոր-Դերենիկ Արծրունին) ձեռն զգաւառօքն և զքաղաքօքն արկեալ զկողմամբք Հերայ և Զարաւանդայ՝ ի հնազանդութիւն ընդ իւրեաւ զկողմանսն զայնոսիկ նուաճէր»[42]: Բայց արաբների հաստատումն Արմինիայի տարբեր մասերում փոփոխություններ էր մտցնում ժամանակակիցների մտածողության մեջ: Այն ստիպում էր, որ մի քանի այլ աղբյուրներում Պարսկահայքի հյուսիսային գավառները համարվեն Ատրպատականի մաս: Ղևոնդը, օրինակ, նկարագրելով արաբների անընդհատ սաստկացող բռնությունները, պատմում է, թե Գագիկ Արծրունին հավաքեց իր զորքը և «ելեալ ասպատակ սփռէր զկողմամբք Ատրպատական աշխարհին, ի Զարևանդ գաւառ, ի Բուտակս[43] և Զիդռոյ, ի Տասուկ[44], ի Գաղնակ, ի Յորմի, ի Սուրենապատ և յայլ ևս մերձակայ գաւառսն...և գայր հասանէր ի գաւառն Հէր»[45]: Ըստ Յակուտի՝ Հերը, Զարևանդը, Սալմաստը և Ուրմիոն նույնպես Ատրպատականի մաս էին կազմում[46]:

Քանի որ արաբ նվաճողները հիմնականում պահպանում էին Սասանյան Պարսկաստանի վարչական բաժանումը, ապա անհրաժեշտ է պարզաբանում մտցնել հայագիտության մեջ արմատավորված ևս մեկ, մեր կարծիքով, սխալ տեսակետի հարցում, թե 387 թ. բաժանման ժամանակ Մեծ Հայքից առանձնացվել էր նաև Կորճայք աշխարհն ամբողջությամբ[47]: Ելնելով հայկական սկզբնաղբյուրների և, մասնավորապես, Եղիշեի տվյալնե-

---

[39] BGA, VI, p. 122.

[40] Al - M o q a d d a s i. Kitab ahsan at-takhasim fi márifat al-akhalim.– BGA, III, p. 51.

[41] *Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Բյուզանդական աղբյուրներ, Ի, Կոստանդին Ծիրանածին (թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Հ. Բարթիկյանի), Երևան, 1970, էջ 10:*

[42] *Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմություն Հայոց (թարգմ. և ծանոթ. Գ. Թոսունյանի), Երևան, 1996, էջ 142:*

[43] *Ավելի ճիշտ՝ Ռոտակ կամ Ռոստակ: Ռոտակի եպիսկոպոսությունը համապատասխանում էր Հեր և Զարևանդ գավառներին (Բ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 348):*

[44] *Տասուկը(Տասվիջ) գտնվում էր Ուրմիո լճի հյուսիսային ափին (Ս. Ե ր ե մ յ ա ն. Հայաստանը և... քարտեզ):*

[45] *Ղ և ո ն դ, էջ 133–134:*

[46] J a c u t, I, S. 171-175, 219, 513, II, S. 502, 922, 959, III, S. 120.

[47] *Ն. Ա դ ո ն ց. նշվ. աշխ., էջ 255:*

րից, ի հայտ է գալիս այն իրողությունը, որ, չնայած հայ Արշակունիների թագավորության անկումից առաջ և հետո Մեծ Հայքի տարածքային մեծ կորուստներին, Հայոց մարզպանության կազմում շարունակեցին մնալ Կորճայքի Կորդիք և Տմորիք երկրամասերը: Եղիշեն վկայում է, որ Ավարայրի ճակատամարտից հետո Տմորիքի անառիկ ամրոցներում ապաստանած հայերը, երբ լսեցին պարսից զորքի գործած չարիքների մասին, «քաջութեամբ ելեալ յարձակեցան օգնականութեամբ ամրականացն, և հասեալ ի մօտաւոր աշխարհն Պարսկաց, յանխնայ կոտորելով՝ նախճիրս արեան գործէին»[48]: Այս տեղեկությունը հստակորեն խոսում է այն մասին, որ պարսկական երկրամասերի հետ սահմանակից Տմորիքը Հայոց մարզպանության մաս էր կազմում: Ելնելով պատմաաշխարհագրական պայմաններից, անկասկած, մարզպանության կազմի մեջ պետք է մտներ նաև Կորդիքը[49]: Ինչ վերաբերում է այդ երկրամասերի տեղադրությանը, ապա այդ խնդրում մեծ է Փավստոս Բուզանդի հաղորդած տեղեկությունների դերը: Պատմիչի վկայությամբ՝ Հայոց Արշակ II թագավորի դեմ ապստամբած երկրամասերի մեջ էին «և ամուր գաւառն Տմորեաց, և ամուր աշխարհն Կորդրեաց. ապա և տէր գաւառին Կորդուաց չոգաւ եկաց առաջի թագաւորին Պարսից»[50]: Ապա, կապված Մուշեղ Մամիկոնյանի ձեռնարկած պատժիչ արշավանքի հետ դեպի հայոց արքայի դեմ ապստամբած երկրամասերը, պատմիչը հաղորդում է, որ «հարկանէր Մուշեղ սպարապետն...զ Կորդուս և զ Կորդիս և զ Տմորիս»[51]: Ակներև է, որ պատմիչը լավ է պատկերացնում հիշյալ երեք երկրամասերի տեղադրությունը, հիշատակելով մի դեպքում արևելքից արևմուտք, իսկ երկրորդ անդամ՝ արևմուտքից արևելք: Անհրաժեշտ է նշել, որ Մովսես Խորենացին, անդրադառնալով Արտաշես I-ի դայակ Սմբատ Բագրատունու գործունեությանը, հաղորդում է, որ վերջինս «հրամանաւ Արտաշիսի բնակէ ի Տմորիս, որ այժմ կոչի Կորդիք, ի յԱլկի նստուցեալ զբազմութիւն գերւոյն»[52]: Այսինքն՝ չնայած այն բանին, որ Փավստոս Բուզանդը հստակորեն միմյանցից տարբերակում է Կորդիքն ու Տմորիքը, պատմահայրը հակված է գրանք նույնացնելու: Քանի որ նա քաջածանոթ էր Հայաստանի աշխարհագրությանը, ապա չպետք է կարծել, թե նա կարող էր սխալ թույլ տալ: Ուստի, հավանական է, որ սկզբնապես Կորդիքն Ալկի ամրոցով[53] եղել է Տմորիքի մի հատվածը, իսկ հետագայում Խորենացու ժամանակներում, բաժանվել է գրանից և հեղինակը, պատմելով՝ Սմբատի՝ Տմորիքի Ալկի ամրոցում հաստատվելու մասին, միաժամանակ անհրաժեշտ է համարել հիշատակել իր ժամանակների իրողությունը,

---

[48] Ե ղ ի շ ե, էջ 254:

[49] Б. А р у т ю н я н. Административное деление закавказских владений Сасанидского Ирана согласно труду Елишэ.— «Кавказ и Византия», вып. I, Ереван, 1979, с. 25.

[50] Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց (բնագիրը Ք. Պատկանյանի), Երևան, 1987, էջ 246:

[51] Նույն տեղում, էջ 320:

[52] Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց. Երևան, 1981, էջ 218:

[53] Բեյթ-ուլ-Շաբաբ գետակի վերին հոսանքի ավազանում պահպանվել է Էլք անունով մի գյուղ, որն ուսումնասիրողները նույնացնում են Խորենացու հիշատակած Ալկիին (Ս. Ե ր ե մ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 32):

թե Տմորիքի այն հատվածը, որտեղ գտնվում էր Ալկին, այժմ կոչվում էր Կորդիք[54]: Փավստոս Բուզանդի տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ աշխարհագրական տեսակետից Կորգուքից արևելք գտնվել է Կորդիքը՝ Բեյթ-ուլ-Շաբաբ գետակի հովտում[55], իսկ դրանից էլ արևելք գտնվել է Տմորիքը՝ Մեծ Զաբ գետի միջին ավազանի շրջանում[56]: Այնպես որ, ըստ ամենայնի, Տմորիք գավառն իր կազմում ընդգրկում էր նաև Կորճայք աշխարհի՝ Կորդիքից արևելք ընկած հյուսիսային գավառները՝ Ճահուկը, Փոքր Աղրակն ու Որսիրանքը[57]: Քանի որ արաբները հիմնականում պահպանում էին Սասանյանների վարչական բաժանումը, ապա հիշյալ գավառները մտան նրանց ստեղծած Արմինիա ոստիկանության կազմի մեջ: Արաբական տիրապետության շրջանում Արծրունի իշխաններն աստիճանաբար շարժվում են հարավ և իրենց իշխանության մեջ ընդգրկում նաև այդ գավառները: Արդեն Բուղայի արշավանքի ժամանակ Արծրունիների իշխանության տակ էին Զլմար, Սրինգ և Ճահուկ ամրոցները[58]: Վերջիններից Զլմարն ու Սրինգը գտնվում էին Փոքր Աղբակ գավառում, իսկ Ճահուկը՝ Ճահուկ գավառում[59]: Բուղայի արշավանքների և հետագա ժամանակաշրջանում արդեն այս գավառները մեծ կարևորություն են ձեռք բերում Արծրունիների համար: Երբ ապօրինաբար Վասպուրականի իշխան դարձավ Վասակը, Գուրգեն Արծրունին «ելեալ փութանակի եկն եհաս յաշխարհս Վասպուրական: Եւ այն ինչ ընդ մտանելն՝ երագապէս հասեալ ի վերայ ամրոցացն Զղմար և Սրինգ կոչեցեալ՝ յինքն գրաւէ զամրոցսն. և կալեալ զՎասակ՝ յինքն գրաւեաց զզօրավարութիւնն բոլոր Վասպուրական տէրութեանս»[60]:

Ըստ Թովմա Արծրունու՝ Փոքր Աղբակից արևելք գտնվող Որսիրանք գավառը նույնպես IX դ. Արծրունիների իշխանության մաս էր կազմում: Արյան լճի ճակատամարտի նախօրեին Գուրգեն Արծրունու գլխավորությամբ այստեղ են ապաստանում Վասպուրականի մեծամեծերն ու փախստական բնակչությունը և պարտության մատնում թշնամուն[61]: Թովմա Արծրունու հետագա վկայություններից երևում է, որ Կորդվաց լեռների շրջանում գտնվող այս գավառները հետագայում էլ մտնում էին Արծրունիների իշխանության մեջ:

---

[54] Բ. Հարությունյան. նշվ. աշխ., էջ 282-283:

[55] Б. Арутюнян. Նշվ. աշխ., էջ 24–25: «Աշխարհացոյց»-յան Կորդիք Վերին, Կորդիք Միջին և Կորդիք Ներքին գավառների (տե՛ս Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց. Վենետիկ, 1881, էջ 32) անվանումները ցույց են տալիս, որ անցյալում այս գավառների ամրողջությունը կրել է միասնական Կորդիք անունը: Այս գավառների «Աշխարհացոյց»-յան նկարագրության աշխարհագրական հերթականությունը վկայում է հօգուտ դրանց՝ Արևելյան Խարուր գետի Բեյթ-ուլ-Շարար վտակի ավազանում տեղադրության (տե՛ս Բ. Հարությունյան. Նշվ. աշխ., էջ 278): Նման եզրահանգման հիմք է հանդիսանում այն, որ Մովսես Խորենացին, ինչպես տեսանք, Բեյթ-ուլ-Շարաբ գետակի վերին հոսանքի ավազանում գտնվող Ալկի ամրոցը հիշատակում է Կորդիքում:

[56] Բ. Հարությունյան. նշվ. աշխ., էջ 280–281:

[57] Նույն տեղում, էջ 281–282:

[58] Թովմա Արծրունի և Անանուն, էջ 212:

[59] Բ. Հարությունյան. նշվ. աշխ., էջ 290–292:

[60] Թովմա Արծրունի և Անանուն, էջ 306:

[61] Նույն տեղում, էջ 224–232:

Այսպիսով, Արմինիան հարավում ընդգրկում էր նաև Մեծ Հայքի Կորճայք աշխարհի Ճահուկ[62], Փոքր Աղբակ[63] և Որսիրանք[64] դավառները: Փաստորեն, հարավում Արմինիա ոստիկանության սահմանները տարածվում էին մինչև Կորդվաց (այժմ՝ Հաքյարի) լեռների շրջանը՝ ընդգրկելով այդ լեռների հարավային լեռնաբազուկները:

Արմինիա ոստիկանության մեջ ընդգրկված էր նաև Մեծ Հայքի Մոկաց աշխարհը: Արաբ պատմիչ Բալազուրին հաղորդում է, որ այն Վասպուրականի իշխանության մաս էր կազմում[65]: Այդ հաղորդման պատճառը Սասանյանների տիրապետության ժամանակաշրջանում ձևավորված վարչաքաղաքական իրավիճակի արտահայտությունն էր: Նախքան 591 թ. Հայաստանի բաժանումը Սասանյան Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև Մոկաց աշխարհը մտնում էր Հայոց մարզպանության Տանուտիրական դնդի մեջ: Բաժանումից հետո Հայաստանի մեծ մասն անցավ Բյուզանդիային, իսկ Հայոց մարզպանությունը համարժեք դարձավ Սեպհական կամ Վասպուրական գնդի երկրին և իր մեջ ներառում էր միայն Վասպուրականը, Մոկքը, Պարսկահայքի ու Կորճայքի որոշ հատվածներ և Դվին քաղաքն իր շրջակայքով[66]: Վասպուրական աշխարհի դաղափարին աստիճանաբար փոխարինում էր Վասպուրական-Հայոց մարզպանություն դաղափարը[67], որի հետևանքով էլ Բալազուրին Մոկաց աշխարհը Վասպուրականի մաս է համարում:

Մոկաց աշխարհից ավելի արևմուտք IX դ. առաջին կեսին արդեն Արմինիա ոստիկանության մաս էր կազմում Սասունը: Աղձնիքի հյուսիսային լեռնային շրջանները, և, հատկապես, Սասունը, գտնվելով Ջազիրա ոստիկանության Դիար Բաքր երկրամասի կազմում, կիսանկախ վիճակ էին պահպանում, և հաճախ մի փոքրիկ ճնշումը բավական էր լինում, որ տեղի ազատասեր հայությունը ոտքի ելներ, ինչպես դա տեղի ունեցավ 749–752 թթ.[68]: Այս ապստամբությունն այն նշանակությունն ունեցավ, որ դրանից

---

[62] Ճահուկը գտնվել է Ջուլամերկից ոչ հեռու գտնվող Ագարակ-դաղ լեռների շրջանում (Հ. Մ ա ր կ վ ա ր տ. Պարսկահայք նահանգը.– «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), 1961, №1, էջ 193): Այդ լեռները գտնվում են Բեյթ-ուլ-Շաբաբ գետակի ակունքների շրջանում:

[63] Փոքր Աղբակի արևմտյան սահմանը Ճահուկ գավառի հետ կազմել է Լևին գետակի արևելյան ջրբաժանը, հյուսիսում՝ Ագարակի լեռներից և Կոհ-ի-Նիհորական լեռնաշղթայից սկիզբ առնող լեռնաբազուկները, որոնք Ակեն բաժանում են Փոքր Աղբակից, հարավում՝ Ջողա լեռների ջրբաժան գիծն, իսկ արևելքում՝ Որսիրանք գավառը (Բ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 292):

[64] Հ. Մարկվարտը, հենվելով այս տեղեկության, ինչպես նաև Վալդեման Բելքի տեղագրական հետազոտության արդյունքների վրա, որի ընթացքում վերջինը հայտնաբերել էր Արյան լիճը, Որսիրանքը տեղադրում է Նեհիլ գետի ավազանում, որտեղ գտնվում է Գյավառի դաշտը (Հ. Մ ա ր կ վ ա ր տ. նշվ. աշխ., էջ 189–190): Վալդեման Բելքը Գյավառի կազայի Դիզա դյուղի մոտ հայտնաբերել էր Արյան լիճը, որը մեր օրերում ճահճուտի է վերածված (Բ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 288):

[65] بلاذري, I, էջ 236:

[66] Б. А р у т ю н я н. Նշվ. աշխ., էջ 19-35:

[67] Բ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 401–402: Հայոց մարզպանության՝ Սասանյան Պարսկաստանի տիրապետության տակ 591 թ. բաժանումից հետո մնացած հատվածը, դատելով սեբեոսի վկայություններից, պաշտոնապես ստացել էր Վասպուրական գնդի կամ Վասպուրական երկիր անվանումը (Ս ե բ ե ո ս. էջ 84, 166):

[68] Ա. Տ ե ր - Ղ և ո ն դ յ ա ն. Սասունի 749-752 թվականների անհայտ ապստամբությունը խալիֆայության դեմ.– ՊԲՀ, 1971, №3, էջ 196–202:

հետո Սասունն աստիճանաբար անջատվեց Ջազիրայից ու միացավ Արմինիա ոստիկանությանը: Արաբ հեղինակների վկայություններից ակնհայտ է դառնում, որ IX դ. առաջին կեսին արդեն Սասունը վարչականորեն Արմինիա ոստիկանության կազմի մեջ էր մտնում: Ոստիկանի սպանության առիթով Իբն ալ-Ասիրը սասունցիներին պարզապես կոչում է «Արմինիայի բնակիչներ»: Խոսելով այն մասին, թե ինչպես Արմինիայի և Ատրպատականի կառավարիչ նշանակված Աբու Սայիդը (Աբուսեթ) հանկարծամահ եղավ, և նրա փոխարեն Մուտավաքիլը նշանակեց նրա որդուն, Իբն ալ-Ասիրը պատմում է, թե «այդ տարում (հիջրի 237 թ.՝ 851-852) Հայաստանի (Արմինիա) ժողովուրդն ապստամբեց իր կառավարիչ Յուսուֆ իբն Մուհամմադի դեմ և սպանեց նրան»[69]: Ի միջի այլոց, հարկ է նշել, որ այդ սպանության դրդապատճառը ոստիկանի կողմից Տարոնի Բագարատ Բագրատունի իշխանի գերեվարությունն էր, որն, ըստ ամենայնի, այդ ժամանակ իր իշխանության տակ ուներ Սասունը, որը, թերևս, միացվել էր VIII դ. վերջին Բագրատունյաց տիրույթ դարձած Տարոնին: Համենայնդեպս, Թովմա Արծրունու՝ այս ապստամբության մասին պատմածից երևում է, որ լեռնային այդ շրջանն այն ժամանակ մտնում էր Բագարատ Բագրատունու տիրույթների մեջ: Պատմիչը վկայում է, որ «յայնժամ բնակիչք լերինն իբրև տեսին, թէ վարեցաւ իշխանն (Բագարատ Բագրատունին) ի գերութիւն, ինքեանք պատրաստեալ են զնոյն փարշմանն կրել զոր դաշտայինքն կրեցին:...Եւ անդէն իսկ և իսկ փութացաւ, եհաս գուժկան առ թագաւորն, եթէ սպանաւ զօրավարն քո և ապստամբեաց ի պետութենէ քումմէ աշխարհն Հայոց»[70]: Դուրս է գալիս, որ այդ ժամանակ Տարոնը և Սասունը կազմում էին Բագարատի մեկ միասնական տիրույթի երկու՝ դաշտային և լեռնային հատվածները:

Արմինիա ոստիկանության արևմտյան սահմանները սերտորեն կապված էին արաբա-բյուզանդական սահմանային ամրությունների գոտու հետ: Յակուտը հաղորդում է, թե բոլոր տարածքները, որոնք հարևան են թշնամու երկրին (Բյուզանդիային) և որտեղից կատարվում են արշավանքներ դեպի այդ երկիրը, կոչվում էին սուղուր[71]: Սահմանային ամրությունների գոտին ձևավորվել էր արաբա-բյուզանդական անընդհատ պատերազմների ընթացքում և տարածվում էր Միջերկրական ծովի ափերից մինչև Բարձր Հայքի Կամախ քաղաքը: Այդ գոտին բաղկացած էր երկու մասից՝ Կիլիկիայի (Ասորիքի սահմանային ամրություններ) և Միջագետքի (Ջազիրայի սահմանային ամրություններ): Վերջինիս կազմում ընդգրկված էին Մեծ Հայքի Բարձր Հայք ու Զորրորդ Հայք (Մոփք) աշխարհների արևմտյան դավառները և Փոքր Հայքի հարավային հատվածը՝ Մալաթիա քաղաքով[72]:

Դատելով աղբյուրների տեղեկություններից՝ սահմանային ամրությունների գոտու հետ սերտ կապերի մեջ էր Արմինիա ոստիկանության Զորրորդ Արմինիա երկրամասը, որի կազմի մեջ էին մտնում Կարնո քաղաքը

---

69 ابن الاثير, V, էջ 288:

70 Թ ո վ մ ա Ա ր ծ ր ո ւ ն ի և Ա ն ա ն ո ւ ն, էջ 190:

71 J a c u t, I, S. 927.

72 Արաբա-բյուզանդական սահմանային ամրությունների գոտու մանրամասն քննությունը տե՛ս Ա. Տ ե ր - Ղ և ո ն դ յ ա ն. Արաբա-բյուզանդական սահմանային ամրությունների գոտին (Սուղուր).— ՊԲՀ, 1981, № 2, էջ 134-149:

(արաբ. Կալիկալա) Բարձր Հայքում և Արշամաշատ քաղաքը (արաբ. Շիմշաթ)՝ Ծոփքում: Վերջիններս, սուղուրի մեջ մտնող Մալաթիայի և Կամախի հետ առաջնային հենակետեր էին արաբների համար: Աղբյուրներում բազմաթիվ տեղեկություններ են պահպանվել այն մասին, որ բյուզանդացիներն անընդհատ արշավում էին դեպի սուղուր, գրավում ու ավերում էին այնտեղի քաղաքներն ու ամրությունները, բնակչությանը գերեվարում էին ու նահանջում, իսկ արաբները վերականգնում էին դրանք, նոր ամրություններ կառուցում և նոր արաբ վերաբնակիչներ բերում[73]: Բալազուրին, օրինակ՝ վկայում է, որ Կամախ քաղաքը մի քանի անդամ ձեռքից ձեռք էր անցել[74]: Սահմանային ամրությունների գոտում արաբների կարևորագույն հենակետը Մալաթիան էր: Այն արաբական զորքերի՝ դեպի Բյուզանդիա կատարվող ամառային արշավանքների ելակետն էր և, հաճախ դառնալով բյուզանդական հարձակման թիրախ, ավերվում էր[75]: Արաբական աղբյուրներում հիշատակվող Անձիտ գավառում, որը սահմանային ամրությունների գոտու մաս էր կազմում[76], գտնվում էին Անձիտ և Խարբերդ (Հիսն Զիյադ) բերդերը[77]:

Զորրորդ Արմինիայի կազմում գտնվող Կարնո քաղաքը Բյուզանդիայի դեմ պայքարում արաբների համար կարևորագույն հենակետային ամրոցներից մեկն էր: Բալազուրին հաղորդում է, որ Կարնո քաղաքը գրավել էր Հաբիբ իբն Մասլաման և, հասկանալով նրա կարևոր ռազմավարական գիրքը Բյուզանդիայի դեմ մղվող պայքարում, այստեղ էր վերաբնակեցրել բավական թվով արաբների[78]: Զորրորդ Արմինիայի կազմում ընդգրկված էր նաև Արշամաշատը: Դատելով Բալաղուրիի տեղեկություններից՝ այն իր շրջակայքով վարչականորեն առանձին միավոր էր համարվում և ուներ զինվորական առանձին կառավարիչ[79]:

Անդրադառնալով Արմինիայի և սահմանային ամրությունների գոտու միջև սահմանագծին՝ նշենք, որ արաբական աղբյուրները, ինչպես վերևում տեսանք, բավական հաճախ են անդրադարձել այդ գոտում գտնվող Կամախին: Յակուտը վկայում է, թե Ծոփքի Անձիտ գավառը ևս մտնում էր այդ գոտու մեջ[80]: Իսկ վերջինիս անմիջապես հարևանությամբ գտնվող Արշամաշատ քաղաքն, ինչպես տեսանք, մաս էր կազմում Արմինիա ոստիկանությանը: Դատելով բնաշխարհագրական պայմաններից՝ սահմանային ամրությունների գոտու մեջ պետք է մտնեին Անձիտ գավառի և Կամախ քաղաքի միջև գտնվող Ծոփքի և Բարձր Հայքի գավառները՝ Գավրեքը,

---

[73] Ղ ևոնդ, էջ 129–130, Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց (յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելուածներով եւ ծանօթութիւններով Ա. Տէր-Միքելեանի), Վաղարշապատ, 1893, էջ 89, 92, بلاذري, I, էջ 236:

[74] بلاذري, I, էջ 219-220:

[75] Նույն տեղում, էջ 221:

[76] J a c u t, IV, S. 993:

[77] Նույն տեղում, II, էջ 276, 417:

[78] بلاذري, I, էջ 234:

[79] Նույն տեղում, էջ 220, 240: Տե՛ս նաև BGA, VI, p. 122:

[80] J a c u t, IV, S. 993.

Ծոփքը (Ծոփք Շահունի), Դեգիքը, Մուզուրը և Դարանաղին[81]: Դատելով ըստ ամենայնի՝ Արմինիա ոստիկանության սահմանագիծը սահմանային ամրությունների գոտու հետ հարավից հյուսիս անցնելու էր սկզբում Արղնիի լեռներով, այնուհետև Արշամաշատ քաղաքի արևմտակողմով, ապա Մնձուր (Մուզուր) և Խոզաթ գետերի ջրբաժանով: Հետո սահմանագիծը հաղթահարելու էր Մնձուր լեռներն ու դուրս էր գալու Կամախի շրջակայքը: Ելնելով Կամախի մեծ կարևորությունից՝ Մնձուր լեռների դրանից դեպի արևելք ձգվող հատվածը ևս հարկ է ընդգրկել սահմանային ամրությունների գոտու մեջ:

Ըստ արաբ հեղինակների՝ Արմինիա ոստիկանությունն արևմուտքում սահմանակցում էր Արման երկրի հետ[82]: Լեոն Արմանը նույնացնում է Փոքր Հայքին[83]: Անվանի հայագետն այստեղ, ըստ երևույթին, կրկնել է արաբ աշխարհագետների երկերի թարգման Ն. Կարաուլովին[84]: Մեր կարծիքով, խոսքն այստեղ, իրոք, վերաբերում է Փոքր Հայքին (ավելի ճիշտ, դրա հյուսիսային մասին), բայց մի կարևոր տարբերությամբ. ըստ էության, արաբ հեղինակներն այդպես էին կոչում իր սահմաններում Փոքր Հայքի հյուսիսային հատվածը և բյուզանդական Առաջին Հայք, Երկրորդ Հայք, Պոնտոս և Դամիրք նահանգներն ընդգրկող «Արմենիակ» բանակաթեմը[85]: Սա առավել ընդունելի տեսակետ է, քանի որ այդ ժամանակաշրջանում Արմինիա ոստիկանության արևմտյան սահմանին հիշյալ տարածքներից որպես վարչատարածքային միավոր ձևավորված էր հենց Արմենիակ բանակաթեմը: «Արմենիակ» բանակաթեմը հիշատակում են նաև արաբ հեղինակները. Իբն Խորդադբեհը հիշատակում է «ալ-Արմանիակ թեմը, որի բերդերից են Կուլունիան (Կողոնիա) և էլի 16 բերդեր, Խալդիայի թեմը, որի սահմանն է Արմինիան»[86]: Բալազուրին, խոսելով բյուզանդացիների տիրապետության տակ մնացած հայկական հողերի մասին, պատմում է, որ դրանք գտնվում են Արմանիակուսի իշխանի կառավարման տակ[87]:

Դատելով Սեբեոսի մի վկայությունից՝ Կամախից դեպի արևելք արաբաբյուզանդական սահմանին էր գտնվում Դերջան քաղաքը: Երբ Թեոդոբոս Ռշտունու և Մուավիայի միջև կնքված 652 թ. պայմանագրի հետևանքով Կոստաս III կայսրը (641–668) նույն թվականին արշավեց դեպի Հայաստան և «իբրև եհաս ի Դերջան, ընդ առաջ եղեն նմա արք խմայելացիք և մատուցին նմա թուղթ յիշխանէն իւրեանց, որ էր դրեալ այսպէս, թե «Հայք իմ են, անդ մի՛ երթար. ապա թէ երթաս՝ ես դամ ի վերայ քոյ, և

---

[81] Անհրաժեշտ է նշել, որ սահմանային ամրությունների գոտու մանրամասն քննության արդյունքում Ա. Տեր-Ղևոնդյանը նույնպես հանգել է այս եզրակացությանը (Ա. Տ ե ր - Ղ և ո ն դ յ ա ն. Արաբական սահմանային..., էջ 141):

[82] BGA, I, p. 181, I b n H a u k a l, Kitab surat at ard, BGA, III, p. 331.

[83] Տե՛ս Լ ե ո. Երկերի ժողովածու. հ. Բ, Երևան, 1967, էջ 362:

[84] Н. А. К а р а у л о в. Сведения арабских писателей о Кавказе, Армении и Адербейджане.— "Сборник материалов для описания местностей и племен Кавказа", вып. 29, Тифлис 1901, с. 56—57, примеч. 7.

[85] Այս բանակաթեմի մասին ավելի մանրամասն տե՛ս Լ ե ո. նշվ. աշխ., էջ 401, 748-749, ծանոթ. 113: Ն. Ա դ ո ն ց. նշվ. աշխ., էջ 231:

[86] BGA, VI, p. 108.

[87] بلاذري, I, էջ 231:

առնեմ զքեզ որ անդրէն փախչել ոչ կարես»[88]: Անհրաժեշտ է նշել, որ հայ-արաբական պայմանագրում, ամենայն հավանականությամբ, որոշակիորեն պետք է արձանագրվեին հարկատու դարձող երկրի սահմանները: Ուստի, այն վաստը, որ Բյուզանդիայի կայսրն արաբներից վերջնագիր ստացավ այն ժամանակ, երբ հասավ Դերջան, ցույց է տալիս, որ արաբներին հարկատու Հայաստանի հատվածի և Բյուզանդական կայսրության միջև սահման էր ճանաչվել Դերջանը: Այս տեսակետի համաձայն՝ սահմանը Կամախից գեպի արևելք անցնելու էր Եփրատ գետով մինչև Դերջան և, այնուհետև, Եփրատ և Ճորոխ գետերի ջրբաժանով բարձրանալու էր հյուսիս, Ապեր քաղաքից գեպի արևելք հատեր Ճորոխը և հասներ Պարխարյան լեռների Վերջնբակ գագաթին:

Անցնելով Պոնտական, իսկ այնուհետև՝ Պարխարյան լեռներով, սահմանն Արմինիայի կազմում էր թողնում Մեծ Հայքի Տայք աշխարհը: Վերջինը, որն արաբ հեղինակները հիշատակում են Սիրաջի (Շիրակ) հետ, ընդգրկված էր Արմինիա ոստիկանության երրորդ Արմինիա երկրամասի կազմում: Այն իր լեռնային տեղանքի պատճառով հաճախ հենակետ էր ծառայում արաբների դեմ ապստամբած հայ նախարարների համար[89]: Դատելով «Վրաց տարեգրության» մի հիշատակությունից՝ սահմանային ամրությունների գոտուց և Բարձր Հայքի Ապեր գավառից հյուսիս Արմինիայի սահմանն անցնում էր Պարխարյան լեռների ջրբաժան գծով: Վրաց սկզբնաղբյուրը, պատմելով Լեոն իշխանի կողմից Աբխազական թագավորության հիմնադրման մասին, հաղորդում է, որ այդ ժամանակ (VIII դ. վերջին) Ատրներսեհ Բագրատունին տիրում էր ի թիվս այլ գավառների, նաև «Ասիսփորի»-ին[90], որը, ակնհայտորեն, համապատասխանում է Տայքի Արսեաց փոր գավառին: Վերջինը Սասանյանների տիրապետության ժամանակաշրջանում հայոց մարզպանության մաս էր կազմում[91], իսկ 774–775 թթ. ապստամբությունից հետո, փաստորեն, դարձավ Կղարջքում ապաստանած հայ Բագրատունիների ճյուղի սեփականությունը[92]: Իսկ Արսեաց փոր գավառը, ըստ «Աշխարհացույց»-ի՝ տարածվում էր «առ Պարխար լերամբն»[93]:

Անդրադառնալով Երկրորդ Արմինիայի՝ Բյուզանդական կայսրության հետ սահմանին, պետք է նշել, որ սկզբում արաբական տիրապետությունը տարածվում էր ընդհուպ մինչև Սև ծովի ափերը: 697 թ. Լազիկայի իշխանն ապստամբել էր բյուզանդական գերիշխանության դեմ և հպատակվել արաբներին[94]: Ըստ Թեոփանեսի՝ VIII դ. սկզբին արաբները տիրում էին

---

[88] Սեբեոս, էջ 165:

[89] Ղևոնդ, էջ 26, 122-123:

[90] Матиане Картлиса. Перевод, введение и примечания М. Лордкипанидзе, Тбилиси, 1976, с. 28.

[91] Ն. Ադոնց. Նշվ. աշխ., էջ 37, ծանոթ. 2:

[92] Հաւաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի. Վենետիկ, 1862, էջ 83–84:

[93] Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ, էջ 35:

[94] Օտար աղբյուրները..., Բյուզանդական աղբյուրներ, Դ, Թեոփանես Խոստովանող (այսուհետև՝ Թեոփանես). Երևան, 1983, էջ 82: Очерки истории Грузии, т. II, Тбилиси, 1988, с. 173—174.

Աբազգիային (Աբխազիա), Լազիկային (Եգեր) և Իբերիային[95]: Վերջիններիս ամրոցներում այդ ժամանակ արաբական կայազորներ էին տեղակայված: Օրինակ՝ Ջախար ամրոցի պաշտպանության համար, որն իր ամրության պատճառով կոչվում էր «երկաթյա» (կարծում են, թե այն նույնական է Ջխալտա ամրոցին, որը գտնվում է Կոգոր գետի վերին հոսանքում, Ջխալտյան գետակի և Կոգոր գետի ջրկիցի մոտակայքում[96]), արաբների կողմից նշանակվել էր ոմն Փարեսման[97]:

Ընդհանրապես, Թեոփանեսի վկայություններից երևում է, որ VIII դ. սկզբին բյուզանդացիների ձեռքում էին գտնվում միայն Սև ծովի արևելյան ափամերձ շրջանները, որտեղից նրանք արշավանքներ էին կատարում դեպի արևելք՝ արաբներին արտաքսելու նպատակով: Ի վերջո, VIII դ. 30-ական թվականների սկզբին, Լևոն Իսավրացի կայսրը հարձակման անցավ և վերականգնեց Բյուզանդական կայսրության իշխանությունը Եգերում, Ափշիլքում և Աբխազիայում[98]: Այն, որ VIII դ. 30-ական թվականների սկզբին Եգերն, Ափշիլքը և Աբխազիան դուրս էին եկել արաբական գերիշխանությունից, պարզվում է թեկուզ 735 թ. Մարուան իբն Մուհամմադի գլխավորությամբ արաբական նոր, մեծ արշավանքի իրողությունից, որը այդ երկրներում արաբական տիրապետությունը վերականգնելու վերջին քայլը եղավ, բայց ավարտվեց անհաջողությամբ[99]: Դրանից հետո արաբական տիրապետությունը սահմանափակվեց այն տարածքում, որն արաբ հեղինակներն անվանում են Երկրորդ Արմինիա:

Փաստորեն, Երկրորդ Արմինիայի արևմտյան սահմանի վերջնական ձևավորումից հետո այն Ճորոխ գետից դեպի հյուսիս պետք է անցներ Մոսքական լեռներով (այժմ՝ Մեսխեթի լեռներ), որից դեպի հյուսիս-արևմուտք գտնվող դաշտավայրային շրջանները գրավվել էին Բյուզանդիայի կողմից: Այստեղից դեպի հյուսիս, ըստ «Վրաց տարեգրության»՝ սահմանն անցնում էր Լիխի լեռնաշղթայով՝ մինչև Ալանաց դռան ամրությունների շրջանը: Լիխի լեռնաշղթայից դեպի արևմուտք գտնվող շրջանները մտնում էին Աբխազական իշխանության մեջ, որի իշխան Լեոնը VIII դ. վերջին հիմնեց Աբխազական թագավորությունը[100]: «Վրաց տարեգրություն»-ը վկայում է, թե Լեոնը, որը ժառանգել էր Աբխազական իշխանությունը, մոր կողմից խազարների արքայի թոռն էր և վերջինիս օգնությամբ էլ դուրս եկավ բյուզանդական գերիշխանությունից ու, «տիրելով Աբխազեթիին ու Էգրիսիին մինչև Լիխի, Արխազաց արքա կոչվեց»[101]: Վրաց պատմիչ Ջվանշերը հաստատում է, որ Լիխի լեռները սահման էին

---

[95] Նույն տեղում, էջ 102:

[96] Очерки истории Грузии, т. II, с. 174, 387.

[97] Թ ե ո փ ա ն ե ս, էջ 104:

[98] Очерки истории Грузии, т. II, с. 175.

[99] Ջուանշերի պատմչի համառոտ պատմութիւն վրաց (այսուհետև՝ Ջ վ ա ն շ ե ր). Վենետիկ, 1984, էջ 100:

[100] Очерки истории Грузии. т. II, с. 250, 281.

[101] Матиане Картлиса, с. 28. Ավելի ուշ շրջանում Լիխի լեռնաշղթայով էր անցնում սահմանն Աբխազական ու Վրացական թագավորությունների միջև (նույն տեղում, էջ 52):

հանդիսանում Երկրորդ Արմինիայի և Աբխազական թագավորության միջև[102]:

Այսպիսով՝ Արմինիա ոստիկանության սահմանագիծն Ալանաց դռնից դեպի արևելք Կովկասյան լեռների գագաթնագծով, Անդյան Կոյսուի ձախափնյա ջրբաժանով, իսկ այնուհետև՝ Ավարյան Կոյսուի արևելյան ջրբաժանով իջնելու էր հարավ՝ ընդգրկելով այժմյան Ղուբաչի քաղաքի շրջակա տարածքն ու դրանից հյուսիս գտնվող լեռնային շրջանը զբաղեցնող Ցիլանը: Արմինիայի արևելյան սահմանը Դարբանդից հարավ անցնում էր Կասպից ծովի արևմտյան ափագծով, իսկ հարավայինը Կուր և Երասխ գետերով շարժվելու էր դեպի արևմուտք մինչև Կոտոր գետի՝ Երասխը թափվելու տեղը, որտեղից Կոտոր գետի հունով իջնելու էր հարավ և, Զարևանդ ու Հեր գավառներն Արմինիայի կազմում ընդգրկելով, հասնելու էր Ուրմիո լճին ու վերջինիս արևմտյան ափագծով իջնելու էր մինչև այժմյան Բարանդուզ-չայ գետը, որի հունով ընթանալու էր դեպի արևմուտք և սկզբում Կորդվաց լեռների հարավակողմով, իսկ հետո մոտավորապես այսօրվա Թուրք-իրաքյան սահմանագծով հասնելու էր Խաբուր գետին: Այնուհետև սահմանը Ջերմ (Բոհտան) գետի հարավային ջրբաժանով հասնելու էր Ջերմ գետին, որտեղից Շատախի լեռների հարավային մասով շարժվելու էր արևմուտք՝ Արմինիայի կազմում ներառելով Սասունը: Ավելի արևմուտք սահմանը անցնելու էր սկզբում Տավրոսյան լեռների, իսկ այնուհետև Արղնիի լեռների ջրբաժանով, որից հետո էլ ընթանալով Արշամաշատ քաղաքի արևմտակողմով և հատելով Արածանի գետը՝ անցնելու էր Մնձուր (Մուղուր) և Խոզաթ գետերի ջրբաժանով: Դրանից հետո սահմանագիծը հատելու էր Մնձուր լեռներն ու դուրս էր գալու Կամախի շրջակայքը: Կամախից դեպի արևելք սահմանագիծն անցնելու էր Եփրատ գետով մինչև Դերջան և, այնուհետև, Եփրատ և Ճորոխ գետերի ջրբաժանով բարձրանալու էր հյուսիս, Սպեր քաղաքից դեպի արևելք հատեր Ճորոխը և հասներ Պարխարյան լեռների Վերջնակ գագաթին: Սահմանագիծը, այնուհետև, Պարխարյան, Մոսքական ու Լիխի լեռների ջրբաժաններով հասնելու էր Ալանաց դռանը[103]:

ГРАНИЦЫ НАМЕСТНИЧЕСТВА АРМИНИЯ

АРМАН ЕГИАЗАРЯН

Резюме

Уточнение границ наместничества Арминия Арабского халифата имеет важное значение для исторической географии Армении и соседних стран. Это наместничество занимало большую часть территории Великой Армении, Грузию

---

[102] Ջվանշեր, էջ 105:

[103] А. Тер-Гевондян. Арминия в I половине IX в. (карта).— В кн.: "Армения и Арабский халифат", Ереван, 1977, с. 168.

и Албанию и прикаспийские области от Дербенда до нижнего течения реки Кур. В течение непрерывных войн образовались обширные буферные зоны на западных и северных границах Армении. Западная буферная зона была автономной территорией, а северная целиком входила в состав Армении. Южная граница Армении проходила по реке Ерасх до реки Котор, а на западе охватывала северные части Парскаhайка и Корчайка, Могк и Сасун. А северо-западная граница Армении проходила по водоразделам Пархарских, Месхетских и Лихских гор.

BORDERS OF THE VICEGERENCY OF ARMINIA

ARMAN YEGHIAZARYAN

S u m m a r y

The definition of the borders of the Vicegerency of Arminia of the Arabian Caliphate has an important significance for historical geography of Armenia and neighboring countries. This Vicegerency occupied bigger part of the Greater Armenia, Georgia and Albania and the coastal regions of the Caspian Sea from Derbend up to the river Kur. During lasting wars large buffer zones were created on the North and West borders of Arminia. The West buffer zone was an autonomous territory, and the North buffer zone was fully included in the territory of Arminia. The South border of Arminia was along the river Eraskh up to the river Kotor, and then included north parts of Parskahayk and Korchayk, Mokq and Sasun. The northwestern border of Arminia was along the Parkhar, Moskakan and Likhi mountain ranges.